

3453

454

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ԵԳԻԼՅԱՆ

ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

БИБЛИО
ИНСТИТУ
ФИЛОЗОФИЧЕСКИЙ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

491.99-1

5-16

Հ
Հայ 491.99-1
Հայակական գրադարան

1928 APR 2010

Գ. ԵԴԻԼՅԱՆ

ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ДИДАКТИЧЕСКИХ
Наук
СССР



Պետական Հրատարակություն. — Յերևան. 1927

31.06.2013

11.06.2013

3953

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Մեր լեզվի բառերը կազմված են հնչյուններից, ամեն մի հնչյունի համար գոյություն ունի առանձին տառ, հին ուղղագրության ժամանակ միքանի հնչյունների համար գոյություն ունեցին յերկուական տառ, որ՝ հ—յ, օ—ո, ե—է, վ—ւ:

Բառը գրավոր արտահայտելու համար սովորաբար վեր և լուծվում հնչյունների, և ամեն մի հնչյունի համար գրվում և իրան համապատասխան տառը տառերի այդպիսի հաջորդականությունը տալիս և բառի գրավոր պատկերը:

Յեթե մեր լեզվի բոլոր բառերը գրվելին այնպես, ինչպես արտասանվում են, յեթե գոյություն չունենային ուղղագրական կանոններ, այն վերը գրում գոյություն չեր ունենալ ուղղագրության հարց, վարույնուն կարգալուն և բառերը հնչյունների վերածելուն վարժանաւը առանց դժվարության և առասիրանների կպեր իր ցանկացածը ուրիշի խոսածը կամ գրածը: Յեթե սխալներ ել պատահելին, կը ներին անուշաղրության սխալներ:

37/3 - 82

Ա 527

Դրառեպվար Ա 137 թ

8 լրտ 1500

Գետերափ առաջին առարտն Վաղարշապատ

իշականությունն այդպես չի սակայն. մեր լեզվի բոլոր բառերը չեն գրվում այնպես, ինչպես արտասանվում են սահմանական բառերը, արտասանվում են՝ կերպ, գրվում այլ կերպ, որ՝ արտասանվում են՝ ավագ, անքամ, ախճիկ, արցակ, գարցյալ, վերչ, անավագ, բուրթ, վարթ, նուրփ և այլն, իսկ նույն բառերը գրվում են հետեյալ կերպ՝ ավագ, անգամ, աղջիկ, արձակ, գարձյալ, վերջ, անմիջական, բուրդ, այլն:

Հնուց մնացած ուղղագրական վորոշ կանոններ դեռ մինչև այժմս ել իրենց ուժի մեջ են. վերնադիրը, հոդվածի առաջին նախադասությունը, վիրջակետից հետո յեկող նախադասությունը մեծատառով պետք է սկսվի, հատուկ անունները մեծատառով են գրվելու. ստորակետի, միջակետի, վերջակետի, բութի և այլ նշանների համար վորոշ կանոններ կան. կանոններ կան սողագրածի համար և այլն. Գրողը պետք է տեղյակ լինի այս կանոններին և գրի այս և այլ կանոնների պահանջների համաձայն. Շատ անգամ կանոններ բերան իմանալը դեռ բավական չե, պետք է վարժվել այդ կանոնների գործածության, պրակտիկ յերկարատես աշխատանքների շնորհիվ պետք է այդ կանոնների գործածությունը սովորությունը սովորությունը մեջ մտել այդ հարցի լուծմանը:

Չեն ուղղագրության ժամանակ գոյություն ունեյին ավելի մեծ դժվարություններ, վորովհետև միքանի հնչյունի համար յերկու տառ եր գործածվում և հայտնի յել չեր, թե վոր գեղագրում նույն հնչյունն այս, վոր գեղագրում այն մյուս տառով պետք է գրվեր. գրողը պետք է վարժածության միջոցով սովորեր, թե վոր բառերի մեջ այս, և վոր բառերի մեջ մյուս տառն եր գործածելու:

Ահա այս հանգամանքները դժվարացնում են ուղիղ գրելու հնարավորությունը և դպրոցի առաջ պահանջ դնում, վոր լավագույն յեղանակով սովորեցվի աշակերտին ուղիղ և անսխալ գրելու. Վոչ միայն ներկայի, այլ և ամեն մի ժամանակի դպրոց այսպիսի պահանջի առաջ և կանգնած յեղեւ, և մանավանդ այն դպրոցը, ուր ուսուցանվող լեզվի արտասանության և գրության ձեւերի մեջ զգալի տարբերություններ են յեղեւ, կամ կան. Հենց սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, վոր ուղղագրություն սովորեցնելու համար հոգացողություն են ունեցել անցյալում անգամ և զանազան ժամանակներ զանազան կերպ են մոտեցել այդ հարցի լուծմանը,

I. ԶԱՆԱԶԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ուղղագրություն սովորեցնելու համար անցյալում առաջ արկվել են և այժմս ել դեռ առաջարկվում են զանազան միակողմանի մեթոդներ. այդ մեթոդների միակողմանիությունը պարզելու համար միքանի խոսք պետք է ասել այն մասին, թե ուղիղ գրելու ժամանակ ինչ հանգամանքներ են դեր խաղում:

Վորպեսզի արտագրողը ձիշտ արտագրի, պետք երանը

ա) տեսնի պարզ ու վորոշ.

բ) կարդա ձիշտ.

գ) հասկանա բառի իմաստը, նշանակությունը.

դ) շարժի ձեռքն այնպես, վոր ձիշտ գծագրի բառի գրապատկերը:

Վորպեսզի լսողը ձիշտ արձանագրի, պետք երանը

ա) ձիշտ—ուղիղ լսի.

բ) ձիշտ արտասանի.

գ) բառի իմաստը հասկանա.

դ) շարժի ձեռքն այնպես, վոր ճիշտ գծագրի բառապատկերը: Այս կերպ, այսինքն թելադրությամբ գրելիս, գրողը նախորոք պետք է իմանա, թե վոր բառերն են մի կերպ արտասանվում և մի այլ կերպ գրվում:

Իրենից գրելու, շարադրելու ժամանակ գրողը պետք է

ա) պարզ պատկերացնի գրելիք բառի իմաստը.

բ) » » » արտասանությունը.

գ) ձեռքը շարժի այնպես, վոր ճիշտ գծագրի բառը: Այս գեղագրում ևս գրողը պետք է նախորոք իմանա, թե վոր բառն ինչպես եւ գրվում:

Այսպես գրելու ժամանակ առանձին մեծ նշանակություն ունի բառերի հնչական վերլուծությունը, վորովհետև բառերը զրվում են վանկային, նույնիսկ հնչական վերլուծության յենթարկվելով:

Ինչ ձեռվ ել գրելու լինի աշակերտը, նա պետք է լավ յուրացրած լինի ուղղագրական կանոններն ավելորդ սխալներից խուսափելու համար:

Ուղղագրություն սովորեցնելու զանազան մեթոդներ միակողմանի կերպով են մոտենում ուղղագրության այս բարդ յերկույթին, և նըանցից մեկը շեշտում ե բարդության այս, մյուսը այն մյուս կողմը:

1. Կան մանկավարժներ, վորոնք ուղղագրություն սովորեցնելու ժամանակ բացառի նշանակություն են տալիս հերականության յիշ ուղղագրական կանոնների ուսուցման և յենթալրում են, վոր այդ կերպ կարելի յի հաղթահարել ուղղագրության բոլոր գժվարությունները: Անկասկած ե, վոր ուղղագրական կանոն-

ների ովնությամբ վորով գժվարությունները հնարավոր ե հարթել, այդ պատճառով ել աշխատանքի այս տեսակից պետք ե ոգտվել դասավանդման ժամանակ, սակայն պարզ է նաև այն հանգամանքը, վոր բազմաթիվ ուղղագրական գժվարություններ անկարելի յե պարզաբանել ուղղագրական կանոններով և պետք ե աշխատանքի այլ ձևերի դիմել:

2. Կան մանկավարժներ, վորոնք ուղղագրություն սովորեցնելու միակ միջոցն են համարում թելադրությունը. Նրանց կարծիքով՝ վորպեսզի աշակերտը ճիշտ գրի, պետք է նախ ճիշտ լսի զրելիքը և ինքն ել ճիշտ արտասանի, ուրեմն ուղղագրություն սովորեցնելու աշխատանքի ժամանակ ուշադրություն պետք ե գարձնել արտասանության որդանի և մանավանդ ականջի գործունեյության վրա: Խնդիրն այսպես ձևակերպեց 1800 թվականին Ոլիվեր մանկավարժը, վորից հետո նույն միտքը ծայրահեղության հանցրեց հայտնի Դիստերվելը:

Ներկայումս գերմանացի մի խումբ մանկավարժներ (Լյուտգեն, Լորգեն) դեռ այժմս ել միակողմանի կերպով զերադասություն են տալիս թելադրության մեթոդին հետեւյալ պատճառաբանությամբ. ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր գերմաններն բառերի $68^{\circ}/_0$ գրվում ե այնպես, ինչպես արտասանվում ե, $26^{\circ}/_0$ —բառերի ուղղագրությունը կարելի յե սովորել ուղղագրական-քերականական կանոնների ողնությամբ, բառերի միմիայն $6^{\circ}/_0$ ը գրվում ե վոչ արտասանության պես:

Այս տվյալից հիշյալ մանկավարժները յեզրակացնում են, վոր ուղղագրություն սովորեցնելու ժա-

մանակ ուշադրություն պետք և դարձնել բառերի արտասանության, լողության և հնչական վերլուծության վրա. նրանց կարծիքով սկսնակը հենց այդպես ել գրում ե, նա լսում ե, արտասանում ե և բառերը վանկերի կամ տառերի վերլուծելով՝ գրում. յեթե զրության խնդրում տեսնելը դեկավար գեր ունենար, այն դեպքում աշակերտները բոլորովին սիսաներ չպետք ե անելին, վորովնետե նույն բառերը հարյուրավոր անդամ տեսնում, կարդում են, բայց ելի սիսաներ են անում, անհնար ե բառերի բոլոր պատկերները մտքումը պահել, պետք ե հենց սկզբեց աշակերտին վարժեցնել ուշադրի լողության և վերլուծական արտասանության ու զրության. Ուսման սկզբի յերկու տարիներում աշակերտներին պետք ե գրել տալ միմիայն այնպիսի բառեր, վորոնք գրվում են արտասանության պես, այնուհետեւ միայն տարբեր կերպով արտասանվող բառերը պետք ե գրել տալ. սկզբի տարիներում շարադրություն չպետք ե գրել տալ այլ այնպիսի նյութեր, վորոնց նպատակը միմիայն և միմիայն ուղղագրություն սովորեցնելն ե:

Թելագրությամբ ուղղագրություն սովորելու մեթոդը կարելի յեռգտագործել վարորդ դեպքերում. նա նույնիսկ կարող ե դրական արդյունքներ տալ. և իսկապես, ինչ կարիք կա անպայման արտագրել տալ այն բոլոր բառերը, վորոնք գրվում են արտասանության պես, այս դեպքում հարկավոր ե միայն կրթել աշակերտի լսելու և ճիշտ արտասանելու կարողությունը, վորից հետո նա կկարողանա ճիշտ գրել այն բոլոր, բազմահազար բառերը, վորոնք արտասանվում և գրվում են միատեսակ. մեր լեզվի բառերի մեծագույն տոկոսը գրվում ե ար-

տասանության պիս, այդ պատճառով ել մեր դպրոցներում ես կարող ե այս մեթոդը մասամբ կիրառվել, Բացի այդ, թելագրության մեթոդի ոգնությամբ վերանում ե արտագրության աշխատանքի միորինակությունը. մշտապես արտագրող աշակերտը, յերբ մի բան ե լսում, կամ ցանկանում ե մի վորեւ բան շարադրել ընկնում ե դժվարությունների մեջ, վորովհետև իր աշքի առաջ տեսողական պատկերը չունի: Թելագրությամբ գրելը տալիս ե այն ոգուտը, վոր աշակերտը սովորում ե լսողական գրգիռներն արտահայտել գրափոր: Կյանքի մեջ շատ հաճախ ե այս ձեռվ գրության կարիքն զդացվում:

Թելագրության մեթոդը մի այլ ոգուտ ել ունի. լսողական տիպի աշակերտներն ավելի յեն բավարարվում թելագրությունից, քան արտագրությունից:

Վերջապես թելագրության մեթոդի ոգնությամբ կարելի յեռնարովի յենթարկել, թե աշակերտներն անցած ուղղագրական կանոններն ու դժվարություններնինչ պես են յուրացըրել:

Ընդունելով հանդերձ այս մեթոդի առավելությունները՝ պետք ե, սակայն, ավելացնենք, վոր անկարելի յերագրարվել միմիայն այս մեթոդով, վորովհետև ուղղագրության դժվարությունն այն չի, թե ինչպես գրել այն բառերը, վորոնք արտասանության պես են գրվում, այլ այն, թե ինչպես անել, վոր աշակերտը ճիշտ գրի հատկապես այն բառերը, վորոնք գրվում են մի կերպ և արտասանվում մի ուրիշ կերպ: Թելագրության մեթոդը չի կարող ոգնության գալ այս դեպքում, վորովհետև թելագրության ժամանակ արտասանվում ե մի կերպ, իսկ գրվում մի ուրիշ կերպ: Բացի այդ, միմիայն

թելաղրությամբ ուղղագրություն սովորեցնելու աշխատանքը միորինակ և ձանձրալի յէ դառնում աշակերտի համար և ավելորդ սխալների պատճառ դառնում:

Յ. Վերջին ժամանակներս ուղղագրություն սովորեցնելու համար առանձնապես հանձնարարվում է արտագրության մերորդը: Արտագրությունը ուղղագրություն սովորեցնելու մի կարևոր միջոց են կատվել նույնիսկ միջին դարերում, ապագրության գյուտից հետո և արտագրությունը իրեն մեթոդ գերակշիռ դեր է ունեցել:

Ներկայի մանկավարժներն արտագրության մեթոդի կարերությունը հիմնավորում են յերկու կերպ. կամ գերակշություն են տալիս այդ աշխատանքի ժամանակ աչքին և կամ ձեռքին. առաջին տեսակետի կողմանից և Մոյմանը, իսկ յերկրորդին՝ Լայը:

ա) Մոյմանի պես մտածողերը հիմնվում են այն փաստի վրա, վար խուլու համրերն ընդհանրապես գրում են անսխալ վորովհետեւ գրելուց առաջ ուշադիր նայում են բառապատկերների վրա: Նորմալ յերեխան ևս գրելուց առաջ պետք է ուշագիր, վերլուծորեն նայի բառերին, դանդաղ և վերլուծելով վանկերի կարդա այդ բառերը՝ ուշագրությունն առանձնապես կենտրոնացնելով բառերի արմատների, վերջավորությունների, այս կամ այն կարևոր վանկերի վրա: Այսպիսի աշխատանքից հետո միայն պետք է գրի: Այստեղ եյականն աչքի աշխատանքն և և վոչ գրելու պրոցեսը:

բ) Արտագրության մեթոդի կարերության հարցին այլ կերպ և մոտենում է այս արտագրելու ժամանակ եյականը տեքստին նայելը չի, այլ ձեռքի շարժումները: Ուսումնասիրությունները ցույց են տվել վոր բառերի լսողության, տեսողության, արտասանու-

թյան և գրության համար կան առանձին կենտրոններ. յեթե այդ կենտրոններից մեկը գագարում է գործելուց, մյուս կենտրոնները շարունակում են իրենց աշխատանքը: Լայի կարծիքով իր ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր ուղղագրություն սովորելու խընդորում եյական և վճռական նշանակություն ունի շարժողական կենտրոնը, մյուս կենտրոնների գերը չնշին ե:

Այս խնդիրը պարզելու համար նա աշակերտների վրա զանազան փորձեր և կատարում. նրանց գրել և տալիս զանազան անմիտ վանկեր՝ արտագրելով, թելադրելով կամ նախորոք կարդացնել տալով և հետո այդ միանույն վանկերը գրել տալով հիշողությունից:

Լայի փորձերը հետեւյալ պատկերը տվին.

I. Թեևագրելով

Միջին թվով
մի աշակ կատարել ե

ա) Աշակերտը գրում է թելադրածն առանց արտասանելու 3,01 սի.
բ) » » » ցած արտասանելով 2,69 »
գ) » » » բարձր » 2,25 »

II. Կատարության կարգավորություն

ա) Աշակերտը գրում է կարդացածը առանց արտասանելու 1,22 »
բ) » » » ցած արտասանելով 1,02 »
գ) » » » բարձր » 0,95 »

III. Սահագրելով

ա) ցած արտասանելով 0,54 »
Ամբողջական բառերով նման փորձեր կատարեցին ուրիշ հոգերաններ և յեկան նման յեղբակացության:

Այս փորձերից հետո եքսպերիմենտալ մանկավարժության կողմանակից շատ մանկավարժներ լայի պես յեկան այն յեզրակացության, վոր դպրոցից գուրս պետք են հանել թելարության մեթոդը՝ տեղ տալով միմիայն արտագրության մեթոդին:

Վոր արտագրությունն ուղղագրությունն սովորեցնելու ամենակարենը մեթոդն ե, կարելի յե ապացուցված համարել լայի և ուրիշների փորձերով և դպրոցական պրակտիկ աշխատանքներով, սակայն անհնար և բավարարվել միմիայն այս մեթոդով, վորովհետև կան գեպեր, յերբ ուղղագրական կանոնն արտագրությունից ավելի շուտ են պատահեն հասցնում, կամ թերապրությունն ավելի նպատականարմար ելինում. վերջապես լավագույն մեթոդն անդամ, յերբ գերիշխող, միահեծան դեր ե ստանձնում, դառնում ե անհետաքըրքիր և ձանձրալի: Ուղղագրությունն սովորեցնելու ամեն մի տեսակի մեթոդից պետք ե ոգտվել իր հարմար տեղում:

4. Դեռ 19-րդ դարու կեսին միքանի մանկավարժներ աշխատում եին մինչև այժմ հիշված մերողների մեջ ներդաշնակուրյուն ստեղծել՝ ոգտվելով բոլոր մեթոդների դրական կողմերից: Ներկայի մանկավարժների մեծ մասը նույն ուղղությամբ ե աշխատում: Այս ձգտումը պատճառաբանվում է հետեւյալ կերպ. ա) աշակերտները մտապատճերային նույն տիպին չեն պատկանում, վորմանք տեսողական տիպի յեն. սրանց մոտ կարևորագույն դեր ունի աչքը, ուրիշները լսողական տիպի յեն. սրանք լավ են սովորում լսելով և արտասանելով. կան նաև շարժողական տիպի աշակերտներ, վորոնք լավ են սովորում գրելով: Վորպեսդի

այս բոլոր տիպերը բավարարվեն, դասավանդման ժամանակ պետք ե գործադրվեն բազմազան մեթոդներ:

բ) Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել վոր աշակերտը մի բան լավ կյուրացնի և մտքում կպահի այն դեպքում, յերբ այդ միմնույն բանը զուգորդվի բազմազան բովանդակությունների հետ. յեթե աշակերտը մի բառ ուշադիր կերպով տեսնի, լսի, ինքն արտասանի և այդ միմնույն բառը գրի, կյուրացնի այդ բառի ուղղագրությունն ավելի հիմնովին կերպով: Յեթե դասավանդման ժամանակ գոյություն ունենաւ միայն մի մեթոդ, անկարելի յե հիշյալ նպատակին հասնել:

գ) Բնագիտական և հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել վոր միորինակ տպավորությունները, աշակերտների միորինակ ձեռքը հոգենում են մարմինը և ձանձրացնում հոգին. բազմատեսակ մեթոդները միայն աշխույժ են մտցնում հոգեկան գործունեյթյան մեջ:

II. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Նախքան ուղղագրությունն սովորեցնելու զանազան մեթոդների մասին խոսելը պետք ենամի և առաջ ներածական միքանի խոսք ասել մեթոդական այն պահանջների մասին, վորոնք ընդհանուր արժեք ունեն բոլոր մեթոդների համար:

1. Ուղղագրություն սովորեցնելու համար ընտըրված նյուրը պետք ելինի հետաքրքրական, գրավիչ յիվ զգացմունք արթնացնող. նկատված ե, վոր աշակերտներն անհետաքրքիր հողվածները գրում են վոչ միայն տղեղ ձևողագրով, այլ և բազմաթիվ տառասիւմաներով:

Գրավոր աշխատանքն անհետաքրքիր և գառնում այն
ժամանակի յիրբ նյութը վերցվում ե լիզվի դասագրքի
անցած հոդվածներից, կամ այդ հոդվածների բառերից
ու ջոկ նախաղասություններից: Ասցած, բազմաթիվ
անդամ կրկնված հոդվածը թարմություն, նորություն
չունի իր մեջ, վորպեսզի այդ կերպ շահագրգուի աշա-
կերտին. իսկ անկախ-անկատ բառերն ու նախադա-
սությունները վորովհետև տրամաբանական մի կուռ
ամբողջություն չեն կազմում, այդ պատճառով ել չեն
հետաքրքրում աշակերտին:

Հենց գրա համար ելգրավորի նյութերը մեծ մա-
սամբ նորուրյուն պետք ե լինեն. ուսուցիչը նյութ
վերցնելով ժողովրդի անգիր բանահյուսությունից,
դպրոցի հասարակական կյանքից, պատմական անցյա-
լից և այլն, տանը պետք ե փոքրիկ հոդվածներ հեղի-
նակի՝ դասարանում աշակերտներին գրել տալու համար:
Այդպիսի նյութեր ցանկալի յե մշակել դասարանում
աշակերտների ովությամբ: Ցանկալի յե գրավոր աշ-
խատանքներին գործնական գրագրության ձև տալ,
պետք ե թելազրել կամ արտագրել տալ նամակ, խըն-
դիր, հայտարարություն, ստացական, հասցե, հեռա-
գիր, հաշիվ, թղթակցություն, աչքի ընկնող դեպքի
նկարագիր, զեկուցում, աշխատանքի հաշվառումն և
այլն: Այս կերպ աշակերտները վոչ միայն նոր նյութ
են գրում, այլ և վարժվում են գրության այս ձևերին,
նախապատրաստվելով ինքնուրույն գրության համար:

2. Գրավոր աշխատանքների նյութի մասին
խոսել նշանակում ե նաև պարզել այն ինդիրը, թե
այդ գրելիք նյութը ինչ կապ ե ունենալու կոմպեկտի
նետ, ինքնըստինքյանհամականալի յե, վոր մի վորոշ կոս-

պլեքս մշակելու ժամանակ պիտք և ջանալ գրավոր աշ-
խատանքների նյութերը հանել, յեզրակացնել այդ կոմ-
պլեքսի թեմայից, այդ կերպ գրավոր աշխատանքը
տրամաբանորեն կկապվի գարոցական առորյա ըուն
աշխատանքների հետ և նրա մի բաղկացուցիչ մասնիկը
կդառնա:

Մոսկվայի լուսրաժնի մեթոդական նամակի մեջ
իրավացիորեն ասված ե, վոր «ամեննեին պարտավորիչ
չե, վոր գրավորի նյութն անպայման տվյալ միջոցին
մշակվող կոմպլեքսի թեմայի նյութը լինի»: Վոչ միայն
այս, այլ այդ նույն տեղում թույլատրելի յե համար-
վում կոմպլեքսի պարապմունքներից դուրս հատուկ
ժամեր հատկացնել մայրենի լեզվի ունակություննե-
րի ամբապնդման համար. «Պարոցական կյանքի արդի
պայմաններում կարելի յե, յերբեմն նույնիսկ անհրա-
ժեշտ ե, ուսումնական ժամերից հատուկ ժամանակ
հատկացնել մայրենի լեզվի ունակությունները ձեռք
բերելուն և ամրապնդելուն»:

3. Ուղղագրություն սովորեցնելու աշխատանքը
տեսում ե տարիներ, աշակերտը տարիների ընթացքում
կատարում ե բազմաթիվ գրավոր աշխատանքներ. յեթե
գրավոր աշխատանքների նյութերն իրար հաջորդեն
խառնիխուռն, յեթե ուղղագրական մի վորոշ տեսակետ
կարմիր թելի պես չանցնի գրավոր այդ աշխատանք-
ների միջով, այն դեպքում այդ աշխատանքներն ոգուտ
չեն տալ. միշտ ել նկատված ե, վոր սիստեմատիկ կեր-
պով տերփող աօխատանեն ե վարու ոգուտ տափա: Ուղ-
ղագրություն սովորեցնելու համար ընտրված նյութերի
մեջ նախ հանդես են գալու ուղղագրական պարզ, հեշտ
յերկույթները, հետո աստիճանաբար գժվարները, ուղ-

դագրական դժվարությունները պետք ե բաժանել տարիների վրա:

Ամեն մի նոր հոդված վոչ միայն ուղղագրական մի վորոշ դժվարության համար պետք ե կազմված վիճի, այլ և անցյալ հոդվածների ուղղագրական կանոնները կամ դժվար գրվող բառերի մի մասը պետք ե կրկնվեն այդ նոր հոդվածի մեջ: Ամեն մի հոդված, թե ինչու յե հաջորդում անցած հոդվածներին, պետք ե իր արդարացումն ունենա:

4. Ուղղագրություն սովորեցնելու համար տարգող բոլոր աշխատանքներն աշակերտը պետք ե կատարի գիտակից կերպով. նա պետք ե շատ լավ հասկանա գրելիք հոդվածի միտքը, այդ պատճառով ել գրելիքը նախքան գրելը պետք ե մտքի տեսակետից այնպիսի վերլուծության յենթարկել, ինչպես դասագրքի մյուս հոդվածները, պետք ե անձանոթ բառերն ու դարձվածքները բացառքին կանոնավոր կերպով. աշակերտը յերեկե չպետք ե չհամարած վորեւ մի բան գրի իր տեսրում, Գրելուց առաջ վոչ միայն պետք ե գիտակցի նյութի բովանդակությունը, իմաստը, այլ և հոդվածը աշակերտի համար պետք ե պարզվի ուղղագրական տեսակետից, իսկ իր գրելուց հետո յել նա հստակություն պետք ե ունենա իր գրածը քննադատելու ուղղագրական տեսակետից:

Ուղղագրական աշխատանքների ժամանակ աշակերտը վոչ միայն գիտակից պետք ե աշխատի, այլ և ինքնուրույն լեկ ստեղծագործական: Աշակերտն ինքը տված փաստերից պետք ե ուղղագրական կանոններ յեզրակացնի, ինքը մասնակցի արտագրելիք կամ թեւալբելիք նյութի մշակմանը, ձևակերպմանը, ինքը

քննադատի իր գրածը, ինքը ուղղագրական զանազան ինսդիբների մասին հարցեր տա ուսուցչին և այլն: Ուսուցիչն ամեն հնարավոր գեպքում պետք ե աշակերտի մեջ արթնացնի ինքնուրույնություն և ինքնագործություն:

5. Ուղղագրական բոլոր աշխատանքներն աշակերտը պետք ե գիտակից կերպով կատարի, բայց վերջիվերջո այդ աշխատանքների հետեւանքն այն և լինելու, վոր աշակերտն ուղղագրական պահանջների համաձայն գրի առանց մտածելու, դատելու ու վճռելու, ձեռքբ պիտի և մերենայուեն ուղիղ գրի, և խսկապես, յեթե վարժ գրովը կասկածում ե, թե մի բառ ինչպես ե գրվում, աչքերը փակում ե, կամ մի այլ կողմ ուղղում, և զրում այդ բառն առանց մտածելու, վճիռը թողնում և ձեռքին և սովորությանը, իսկ ձեռքը մեքենայորեն մեծ մասամբ ուղիղ և գրում, յեթե զրողն անցյալում այդ բառը միքանի անգամ ուղիղ և գրել: Ուղղագրական վարժությունների նպատակն ե բոլոր դժվար գրվող բառերն ուղիղ գրել մեքենայորեն և սովորության համաձայն:

ա) Զերքն այս վիճակին հասցնելու համար պետք ե ուղղագրական տեսակետից դժվար գրվող բառը հաճախակի գրել, այն ել վոչ թե իրար յետելից, այլ տարրեր ժամանակում, ուրիշն մի հոդվածի մեջ մատնանշված դժվարությունները պետք ե գալիք հոդվածների մեջ և շատ կատելի չափով կրկնվեն. վարժությունների կրկնությունը ուղղագրություն սովորեցնելու կարերագույն միջոցներից մեկն ե:

բ) Մի բան լավ և յուրացվում և մտքում պահվում, յեթե դարձել և ուօպերյան առարկա, և հաս-

կացվել ե նըրա առանձնատկությունը. ուղղագրական գիտելիքներն այն ժամանակ սովորություն կդանուան, յերբ աշակերտի ուղղագրությունը կենարոնացած լինի գեպի ուղղագրական վարժությունը, հետաքրքրվի այդ վարժությամբ, գիտակցի, թե ինքն ուղղագրական ինչ յերևույթ պիտի այժմ սովորի, և այդ ուղղագրական յերևույթն ինչ առանձնահատկություն ունի: Այդ պատճառով ել հոդվածների ուղղագրական վերլուծությունը, գժվարությունների պարզաբանումը, կանոնների փառ տերից յերրակացնելը մի անհրաժեշտ պայման և ուղղագրությունը սովորություն դարձնելու համար:

գ) Մի բան լավ և յուրացվում և մտքում պահվում, յերբ մարմինը կայտառ, թարմ ե, իսկ գիտակցությունը թարմ ու տրամադրի. հոգնած ու ձանձրացած ժամանակ գրված աշխատանքների մեջնկատելի չափով մեծանում և ուղղագրական սխալների քանակը և մոռացվում տրված բացատրությունները: Հենց այդ պատճառով ել ուղղագրական հոդվածները սովորաբար տպագրական հինգ տողից ավելի չպետք ել լինեն:

դ) Յեթև ուղղագրական իմացությունները սովորություն են դառնալու, ապա ուրեմն աշակերտը միմիայն և միմիայն այնպիսի բառեր և տեսնելու, վորոնց մեջ տառասխալներ չկան, իսկ ինքն ել զբուխ տառասխալ չպետք ե անի. դպրոցական աշխատանքների ժամանակ ամեն կերպ պետք ե սխալներից խուսափել: Սխալ տեսածը տպագրվում և հիշողության մեջ, իսկ իր սխալ գրածն ավելի վատ աղդեցություն և ունենում, վորովհետև թե իր գրած սխալն ե տեսնում, և թե ձեռքն ե վարժվում սխալ շարժումներին: Անցյալում ուղղագրություն սովորեցնելու հիմնական միջոցն

եր համարվում սխալներն առանձնապես դիտելի դարձնեն աշակերտի համար: Այդ տեսակետն այժմ միանգամայն անընդունելի յե համարվում:

Վորպեսպի խուսափենք սխալներից, աշակերտներն պետք ե գրել տալ այնպիսի հոդվածներ, վորոնք մտքի և ուղղագրական տեսակետից նախորոք մշակված են, դժվար բառերը պետք ե զբատախտակին գրված թողնել թելագրության ժամանակ, աշակերտը պետք ե իրավունք ունենա ուսուցչին հարցնելու այն բառերի գրության մասին, վորոնց վերաբերմամբ կասկածում ե, կամ պետք ե ուղղագրական բառարանում վորոնի այդ բառերը. դասարանի պատից կախված պետք ե մինեն այնպիսի թղթեր, վորոնց վրա գրված են դժվար գրվող բառեր մեծ-մեծ տառերով:

III. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ԶԱՆԱԳԱՆԻՉՈՂՈՑՆԵՐ

I. ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրել նշանակում ե՝ առաջը դնել ձեռագիր կամ տպագիր մի հոդված, նայել ուղղագրությամբ, կարդալ հոդվածը և նույնը գրել տետրակում կամ մի այլ թղթի վրա:

Արտագրության ժամանակ աշակերտը տեսնում է որինակը, կարգում ե, ուրեմն և լուս ե իր կարդացածը, հասկանում է կարդացածի իմաստը, ձեռքի շարժումներ և կատարում, զգում ե այդ շարժումները, տեսնում է ձեռքի կատարած շարժումները, իսկ այդ բոլորից հետո տեսնում ե իր գրածի պատկերը: Զարմանալի յել չե, վոր աշակերտն այսքան շատ զգագոր-

դումների գեպքում զըածը միտքը կպահի շատ ավելի
լավ, քան մի այլ գեպքում:

Արտագրության ժամանակ աշակերտը զանազան
կասկածների մեջ չի ընկնում, վորովճետն նախ տեսնում
և բառ և հետո միայն գրում: Արտագրությունը, յեթե
մանավանդ ձեռագիր որինակից ե լինում, նպաստում
և ձեռագրին: իսկապես ձեռագիրը մշակելու համար
առանձին հողվածներ չպետք ե լինեն, այլ ուղղագրա-
կան նպատակների հետապնդող հողվածների գրության
ժամանակ պետք ե լավ ձեռագիր սովորեցնելու աշ-
խատանքները ևս ինկատի ունենալ, այնպես վոր, ար-
տագրության հողվածը պետք ե մինչույն ժամանակ
նպաստի և ձեռագրի և ուղղագրության վարժեցման:

Արտագրությունն ուղղագրություն սովորեցնելու
ամենակարեւը միջոցը կդառնա այն գեպքում, յերբ
ուսուցիչն այդ աշխատանքը կազմակերպելու ժամա-
նակ զեկավարվի հետևյալ մեթոդական պահանջներով.

1. Աշակերտը պետք է արտագրի այնպիսի մի
հողված, վորի մրտեր հասկանում ե, յեվ վորը նա-
խորագ ուղղագրական վերլուծության և յենքարկվել: մե-
քենայորեն, առանց հասկանալու վոչինչ չպետք ե գրի:

Հողվածի ուղղագրական վերլուծությունը տեղի յե
ունենալու հետևյալ կերպ. ուսուցիչը, յեթե տանը
պատրաստած հողված ունի, դասարանում կարդում և
միանգամ ամբողջությամբ, կարող ե սկզբից նույնիսկ
հայտարարել, թե արդ հողվածի մեջ ուղղագրական
ինչ առանձնահատկություն ե շեշտվելու: Առաջին ըն-
թերցանությունից հետո գրում և նույնը գրատախ-
տակի վրա, կամ դասն սկսելուց առաջ ե գրած լինում,
աշակերտները մի անգամ կարդում են, վորին անմի-

ջապես հաջորդում ե անհասկանալի մաքերի ու բառե-
րի իմաստի վերլուծությունը, վորից հետո վոչինչ
անձանոթ և անհասկանալի չի մնում:

Մաքի այս վերլուծությանը հաջորդում ե ուղղա-
գրական վերլուծությունը: մինչ այդ աշակերտները
կարող են գրատախտակին գրված հողվածը միթանի -
անգամ կարդալ, վորից հետո տեղի յե ունենում ուղ-
ղագրական կանոնի լուսաբանությունը, կամ բացա-
տրվում են գժվար գրվող բառերի գրության ձևերը:
Այդ գժվար բառերը վանկային վերլուծության են
յենթարկվում, ցույց ե տրվում այն վանկը, արմատը
կամ վերջագործությունը, վորի մեջ կա ուղղագրական
գժվարություն, ընդգծվում են այդ բառերը կամ եյա-
կան մասերը, գրատախտակի աղատ մասում այդ բա-
ռերը գրվում են վանկ-վանկ և ապա միասին, կար-
գացվում են վանկ-վանկ և ապա ամբողջական կերպով,
աշակերտներին նույնը գրել ե տրվում գրատախտակի
վրա:

Այս վարժությունների ժամանակ չպետք ե աշա-
կերտի ուղղագրությունը դարձնել գեղի գժվար գրվող
տառը, այլ ուղղագրության առարկան պետք ե դարձնել
ամբողջ բառը կամ նրա այն մասը, վորի մեջ հանդես
ե գալիս ուղղագրության արժանի տառը. պետք ե այն-
պես անել, վոր ամբողջական բառապատկերի մեջ տառն
իր տեղն ունենա և այդ ամբողջության մի մասը կազ-
մի. ջոկ տառն առանձին վերցրած ուղղագրական
տեսակետից վոչ մի հետարքը տառը միախայն ուղղագրական
նշանակություն ունի:

Այս վերլուծություններից հետո անմիջապես
չպետք ե գրեն աշակերտները, այլ գեռ միթանի ան-

գամ նույն հոդվածը պիտք ե կարդան մի կամ յերկու անգամ վերլուծական ձեռվ (դժվար բառերը վանկերի բաժանելով), այսուհետև բնական ձեռվ։ Կրկնակի այս ընթերցանության նպատակն ե, վոր աշակերտները վարժվեն հոդվածն անսխալ կարդալուն. անսխալ կարդալ չկարենալու պատճառով հաճախ աշակերտները գրելիս անտեղի սխալներ են անում, բայց այդ, ուղղագրական վերլուծությունից հետո աշակերտը յերբ հոդվածը նորից ե կարդում, նա ակամայից ավելի մեծ ուշադրություն ե դարձնում այն բառերի ուղղագրության վրա, վորոնք փոքր ինչ առաջ բացատրվել են։ Ընթերցանության այս վարժությունը հաճախ չպետք ե կրկնել, վորովհետև կարող են հոդվածը անդիր անել, իսկ անդիր արած գեպքում բնագրին ել ուշադրությամբ չեն նայում։

2. Ուղղագրություն սովորելու խնդրում մեծ նշանակություն ունի նաև արսագրության ձեփք, յեղանակը։ Արտագրելիս աշակերտները, մանավանդ մկնակները, արամագրություն են ցույց տալիս նայելու բառերի վանկերին կամ նույնիսկ հատ-հատ տառերին և այդպես ել գրելու, այն ե՝ վանկ-վանկ կամ հատ-հատ տառերով։

Սա մի շատ վատ յեղանակ ե, վորովհետև մարդ այն ժամանակ ե ուղղագրություն սովորում, յերի բառի ամբողջական պատկերին ենայում, ամբողջությունը միանդամից կարդում և առանց կրկին նայելու միանդամից զրում։ Ամբողջությունն ավելի լավ ենկատվում, քան մասնիկը, վանկը կամ տառը, վորոնք արժեք ու նշանակություն են ստանում միմիայն ամբողջական պատկերի մեջ։ Իրականությունը ցույց ե տվել

վոր վանկ-վանկ կամ տառ-տառ զրոյ աշակերտները չեն կարողանում կանոնավոր ուղղագրություն սովորել։ Դժբախտաբար Ա. աստիճանի դպրոցների մեր աշակերտության մեծագույն տոկոսը վարժված ե զրության այս վատ յեղանակին։

Աշակերտներին կարելի յե հետեյալ կերպ ամբողջական գրելու յեղանակին վարժեցնել։ Մկղբնական վարժությունների ժամանակ (Ա. խումբ) ուսուցիչը գրատախտակին զրում և նույն բառը կամ կարճ մի նախադասություն միքանի անգամ, աշակերտները լուս զիտում են ուսուցչի ձեռքի շարժումները, ապա կարդում են միքանի անգամ գրածը, այնուհետև տրվում են ուղղագրական բացատրություններ, յեթե անհրաժեշտ ե, գրածներից բոլորը նշնչում և թողնվում ե մի հատ, վորպեսզի աշակերտներն իրենց ուշագրությունն ավելի մեծ չափով կենտրոնացնեն այդ մի որինակի վրա։ Այդպես նայելուց հետո փակում են իրենց աշքերը և յերկակայության մեջ պատկերացնում գրած որինակը, վորից հետո զրում են տետրում նույնն առանց նորից որինակին նայելու։ Վորպեսզի գրածին չնայեն, գրածը պետք ե ծածկել թղթով։ աշակերտների գրելուց հետո բաց ե արվում գրատախտակին գրածը և համեմատվում աշակերտների գրածի հետ։ Այս վարժություններն այնքան պետք ե կրկնել, մինչև վոր աշակերտները կվարժվեն ամբողջություններ գրել տետրում առանց որինակին նայելու։

Ուսման Ա. և Բ. տարիների ընթացքում աշակերտին միշտ ել պետք ե որինակներ տալ գրատախտակի վրա և արտագրել չպետք ե տալ տպագիր կամ ձեռագիր ուղղագրական գրքույկներից, վորովհետև

այդ ժամանակ հնարավորություն չկա բառերին մաս-
մաս նայելու առաջն առնել, ուսուցիչը չի կարող ուղ-
ղագրական վերլուծության աշխատանքներն այնպիս
ընդհանուր գարձնել ինչպես այդ հնարավոր ե, յեր
վեր և լուծվում գրատախտակին գրած որինակը:

Գրեթե գրելուն կարելի յե անցնել ուսման Դ. տար-
վանից. նախորոք ուսուցիչը բացատրում ե, թե զըր-
քից արտագրելիս ինչպես պետք ե նայել գրքին, ինչ-
պես կարգար, ինչպես ամբողջությունը գրելիս չի կա-
րելի նորից որինակին նայել և աշակերտների գրելու
ժամանակ նայում ե, թե ով ե իր պահանջը կատա-
րում և ով՝ վոչ:

Գրքից արտագրելիս աշակերտը նախ պետք ե
կարդա ամբողջ հոդվածը, այնուհետև առաջին նա-
խադասությունը կամ նախադասությունները մինչև
վերջակետը, այնուհետև ովետք ե ուշադիր նայի առա-
ջին նախադասության կամ նրա առաջին բառին կամ
բառերին և զրի այդ նույնը առանց գրքին նայելու,
այնուհետև զրելու յե հաջորդ բառերը: Դըանից հետո
պետք ե ամբողջական նախադասություն գրելուն վարժ-
վի. վորպեսզի այդ անցումը հեշտ լինի, ուղղագրա-
կան վարժության համար հեղինակված հոդվածի նա-
խադասությունները պետք ե կարճ լինեն:

Գրելուց հետո աշակերտը սովորություն պետք ե
ունենա կարդալու իր գրածը դանդաղ, նույնիսկ վանկ-
գանկ, վորպեսզի այդ վերլուծական ընթերցանության
ժամանակ նկատի իր սխալները և ինքն ուղղի, այնու-
հետև իր գրածը պետք ե նորից ուշադիր կերպով հա-
մեմատի բնագրի, գրատախտակին կամ զրքում զըր-
գածի հետ և ինքն ուղղի իր սխալներն այն կերպ,
ինչպես սովորեցրել ե նրան ուսուցիչը:

3. Ուսման Ա. և Բ. տարիների ընթացքում աշա-
կերտը պետք ե արտագրի միմիայն դասարանում, ու-
սուցչի ղեկավարությամբ, այն ել.գրատախտակից. տա-
նու գրավոր աշխատանք չպետք ե տալ: Ուսման Գ.
տարվանից կարելի յե տանու գրավորաշխատանք տալ,
վորովհետև աշակերտներն այդ ժամանակ արդեն հա-
մեմատական կայուն ձեռագիր են ձեռք բերել և վարժ-
վել են ամբողջական գրելու յեղանակին:

Տանը գրվող աշխատանքները պետք ե փոքր լի-
նեն և նախորոք դասարանում կարդացվեն, ուղղագրա-
կան վերլուծության յենթարկվեն, այլապես տանու աշ-
խատանքն ոգուտի փոխարեն վնասներ կտա: Բ. աս-
տիճանի գարողում տանու աշխատանք պետք ե տալ
շաբաթական յերկու կամ յերեք անգամ. աշխատանքը
կատարելուց հետո ուսուցիչն անպայման պետք ե
սուռգի այդ աշխատանքները և յեղակացություններ
հանի գալիք աշխատանքների համար:

4. Մանկավարժական գրականության մեջ վիճե-
լի մի խնդիր ե, թե ուղղագրության որինակը միմի-
այն ձեռագիր պետք ե լինի, թե կարող ե նայել տպա-
գիր լինել: Ուղղագրություն սովորեցնելու նպատակով
հրատարակված զրքերը պետք ե ձեռագիր տառերով
տպվեն, վորովհետև ձեռագիր որինակից արտագրեն
ավելի հեշտ ե, աշակերտը նույն կերպ գրում ե իր
տետրում, իսկ տպագրի ժամանակ հաճախ ձեռագիր և
տպագիր տառերն իրար նման չեն: Բացի այդ, ձեռա-
գիր որինակն ավելի լավ ե ազդում աշակերտի ձեռա-
գրի վրա: Ուղղագրական զրքերը հրատարակվելու յեն
ուսման Գ. և բարձր տարեների համար:

Ա. և Բ. խմբակի աշակերտները պետք ե արտա-
գրեն գրատախտակի վրա՝ զըրգած որինակից: Ցանկալի

Եյ այդ խմբ ակիհամար հրատարակել մեծ թերթերի վրա մեծ տառերով տպագած հոդվածներ, իրրե արտագրության որինակներ:

Ցերըսրդ խմբակից, բացառիկ դեպքերում նույն խոկ Բ. խմբակի յերկրորդ կիսամյակից սկսած, պետք ե աշակերտներին տպագիր որինակ ևս տալ, վորով հետեւ հասարակական կյանքում տպագրից արտադրելու առիթներ շատ են լինում, և աշակերտը դպրոցում շատ ավելի մեծ չափով գործ ունի տպագիր, քան ձեռագիր գրության հետ:

4. Արտագրության աշխատանքները նետարելիր դարձնելու համար մանկավարժներն առաջարկում են աշխատանքի հետեւյալ ձեռքը. արտագրության որինակի մի վորոշ մասի համար հարց ե արվում աշակերտներին, սրանք ել հոդվածի մեջ գտնում են համապատասխան նախադասությունը և արտագրում, կամ ուսուցիչը պահանջում ե, վոր աշակերտներն արտագրեն չոդվածի այս կամ այն գործող անձի ասածները, այս կամ այն դեպքի նկարագիրը և այլն: Միքիչ վարժ աշակերտներին կարելի յե հանձնարարել, վոր հոդվածի մեջ փոքրիկ փոփոխություններ առաջացնեն և հետո զբեն՝ հատուկ անունները գերանունների փոխեն, յևզակիները հոգնակի դարձնեն, բայերի ժամանակը փոխեն, ածականները գերազական աստիճանի փոխեն և այլն: Առաջարկում ե ողափել նկարներից և բառախմբերից, յեթաղբենք պատից ընտանեկան կյանքից մի մեծ նկար և կախված, և տակը դրված են հետեւյալ բառերը.

սեղան

թանաքաման

Սուրեն

բաժակ

դանակ

Աստղիկ

ջրաման	ինքնային	Վիկեն
լամպ	դուռ	Լուսիկ
աթոռ	գլշաման	Շուշան
խալի	մահճակալ	Վահան և այլն:

Նկարին նայելուց հետո ուսուցիչն ասում ե՝ գրեցեք այն բառերը, վորոնք վերջանում են «ակ» կամ «ան» մասնիկներով, գրեցեք տղաների կամ աղջիկների անունները և այլն: Առանց նկարների յել կարելի յե գրատախտակին դանաղան բառախմբեր կամ փոքրիկ նախադասություններ գրել և արտադրել տալ:

II. ԹԵՂԱՐԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեղադրությամբ գրելիս աշակերտն ուսուցչի կարգացած կամ բերանացի ասած խոսքերը գրում ե առանց գրքին նայելու՝ հնչյունական տպագորություններն անկախորին վերածելով տառերի: Ինչպիս տեսանք, թեղադրության մեթոդն ել իր տեղն ունի ուղղագրություն սովորեցնելու գործում: Թեղադրությունը լինում է յերեք տեսակ՝ բացատրական կամ դիտողական, տպատ և ստուգողական, վորոնց նկարագիրը արվում և ստորև:

Ա. Բացատրական կամ դիտողական թելադրություն

Բացատրական՝ դիտողական թելադրության ժամանակ ուսուցիչը նախորոք բացատրում և դժվար բառի կամ բառերի ուղղագրությունը, վորպեսի մայդ բացատրությունը դիտողական ընույթ ունենա, այդ դժվար բառերը գրում ե գրատախտակի վրա և տալիս ուղղագրական բացատրություններն այնպիս, ինչպիս արտագրության աշխատանքների ժամանակ:

1. Ազգընական աշխատանքների ժամանակ ամբողջ հօդվածը գրվում ե գրատախտակի վրա, բացատրվում

են դժվարությունները, աշակերտները միքանի անգամ անհատապես և խմբովին կարդում են հոգվածը, վորից հետո ջնջում կամ ծածկվում ե գրվածը և բովանդակությունը թելաղրվում աշակերտներին։ Բացատրության ժամանակ բացատրվում են միմիայն դժվար գրվող բառերը. ցանկալի յե, վոր այդ բառերը ջոկ գրվեն և բացատրվեն։

2. Վորոշ վարժությունից հետո անհրաժեշտ չե, վոր թելաղրելիք նյութի բոլոր բառերը գրվեն գրատախտակի վրա. ընդհակառակն, պետք ե բավականանալ միմիայն այն բառերի գրությամբ և բացատրությամբ, վորոնք ուղղագրական մի վորու դժվարություն են ներկայացնում։ Այս դեպքում ևս թելաղրելիս պետք ե գրված բառերը ջնջեն կամ ծածկվեն։

3. Աշակերտների գրելու ժամանակ առակերտներից մեկը կարող ե գրատախտակի վրա նույնը գրել, թեև այդ անհրաժեշտ չե ամեն դեպքում։ Ավելի ցանկալի յե, վոր գրատախտակի վրա գրողն ուսուցիչը լինի, վորովհետև նա կորի ավելի գեղեցիկ, արագ և ճիշտ։

Ցեղե թելաղրելու ժամանակ աշակերտներից մեկն ե գրում գրատախտակին, նրա ուղղագրական սխալները չպետք ե ուղղել աշակերտների մասնակցությամբ, այլ ուսուցիչն ինքը պետք ե անմիջապես հենց գրելու ընթացքում, յերբ մյուս աշակերտներն զբաղված են թելաղրածը գրելով, ուղղել տա սխալներն աննկատելի կերպով, վորպեսզի մյուս աշակերտները չտեսնեն այդ սխալները և տպափորվեն։

4. Յերբ բոլորը գրել վերջացրել են, այնուհետև համեմատության են դրվում գրատախտակի յեվ առակերտների գրածները և սխալներն ուղղվում դասըն-

նում աշակերտների միջոցով, ուսուցիչը արձելով գաւարանում վերահասու յե լինում, թե սխալներն ինչպես են ուղղվում։

Բ. Ազատ թելաղրություն

Ազատ թելաղրության յեղանակը բավականին մեծ ընդունելություն ե գտել Ուսուաստանում։ Ազատ թելաղրությունը տեղի յե ունենում հետեւյալ կերպ. աշակերտը գրելիք նյութի բովանդակության հետ ծանոթանում ե նախորոք և ապա առանց գրքին նայելու նույն հոդվածի բովանդակությունը զրում ե իր խոսքերով։

1. Սկզբնական աջախտանիների ժամանակ ուսուցիչը և ապա աշակերտները կարդում են գրելիք հոդվածը ամբողջությամբ, վորից հետո տեղի յե ունենում զրույց իմաստը պարզելու համար, հետո կարդացվում ե հոդվածի առաջին փոքրիկ մասը ուշազրությամբ և ուղղագրական տեսակետից, ապա տեղի յե ունենում զրույց ուղղագրական ուշազրավ յերեսույթների մասին, այնուհետև աշակերտներն առանց գրքին կամ գրատախտակի վրա գրածին նայելու իրենց տեսրերում զրում են այդ կտորի բովանդակությունն իրենց բառերով, իհարկե մոտ մնալով ընագրի լեզվին։ Նույն ձևով զրում են հաջորդ կտորները մինչև վերջը։

2. Այս ուղղությամբ առաջադիմելուց հետո կարելի յե ամբողջ գրելիքը միանգամից ուսումնասիրել իմաստի և ուղղագրության տեսակետից և աշակերտին գրել տալ մեծ. մեծ կտորներով, կամ ամբողջը միանգամից։

3. Աշխատանքի այս յեղանակը միանգամայն հանձնարարելի յե, վորովհետև աշակերտը ընագրի վե-

բարերմամբ մի վորոշ ազատություն և ստանում, ինչ-
քնուրույն ուղղագրական աշխատանք և ձեռնարկում,
վոչ թե ուսուցչի թելաղրածն ե դրում կամ ուրիշի դրածն
արտագրում, այլ շարադրում և ծանոթ նյութի մասին:
Այս կերպ աշակերտը վոչ միայն ուղղագրություն և
սովորում, այլ և նախապատրաստվում և շարադրու-
թյուն գրելու համար: Այս ձեի աշխատանքը կարելի
յի վոչ միայն ազատ թելաղրություն, այլ և ազատ
արտագրություն կամ, ավելի ճիշտ, կաշկանդված կամ
ուղղագրական շարադրություն անվանել: Ազատ թե-
լաղրություն արտահայտությունը պահպանեցեք, վո-
րովհետև մանկավարժական գրականության միջ այդ
և գործածական:

Գ. Ստուգողական թելաղրություն

Ստուգողական թելաղրության ոգնությամբ ու-
սուցիչն ստուգում ե, թե աշակերտներն ինչպես են
յուրացրել ուղղագրականախկին բացատրություններն
ու վարժությունները: Ուսուցիչն ամիսը կամ յերկու
ամիսը մեկ անգամ մի հոդված և կազմում ուղղագրու-
թյան նախկին վարժություններից և առանց աշակերտ-
ներին ուղղագրական բացատրություններ տալու, թե-
լաղրում և ամբողջ հոդվածը, իսկ աշակերտները գրում
են՝ առանց ուսուցչին հարցեր տալու և նրանից ուղ-
ղագրական բացատրություններ խնդրելու: Ուսու-
ցիչը տանը նայում և այդ աշխատանքը և յեզրակա-
ցություններ հանում իր անելիքների համար:

Թելաղրության նյութը պետք և լինի ամբողջա-
կան մի միություն: ցանկալի չե անկառ բառերից կամ
անկախ անկախ նախադասություններից կազմված թե-
լաղրությունը: Թույլատրելի չե այնպիսի հոդվածի

թելաղրությունը, վորտեղ արհեստականորեն կուտակ-
ված են ուղղագրական դժվարություններ: այս գեպ-
քում անտեղի կերպով շատանում և աշակերտների կա-
տարած սխաների քանակը:

Նշանակություն ունի նաև թելաղրության ձեվը:
Ուսուցիչը նախ կարգում և ամբողջ նյութը, վորպես-
զի աշակերտները գրելուց առաջ և գրելու ժամանակ-
գաղափար ունենան նյութի ամբողջականության մա-
սին: Այնուհետև մեկ կամ յերկու անգամ կարգում և
առաջին նախադասությունը կամ նախադասություն-
ները, նայած կարեքին, աշակերտները կրկնում են
նույնը, վորքան կարիք կա, նույնիսկ չեն կրկնում,
յեթե նախադասությունը փոքր ե, ապա սկսում են
լուռ կամ ցածր փափսուկով գրել: Յերբեմն ցանկալի
յի խմբական կրկնությունը, վորովհետև այդ կերպ աշ-
խույժ և մանում աշխատանքի մեջ, բոլորն են արտա-
սանում գրելիքը, իսկ մեզ հայտնի յի, վոր արտասա-
նելու գրելն ավելի լավ արդյունք և տալիս, քան լուռ
լսելն ու գրելը: Այս կերպ գրում են հաջորդ նախա-
դասությունները մինչեւ վերջը: Մի ամբողջական միտք
կազմող միքանի նախադասություններ չպետք և բա-
ժանել իրարից, այլ ուսուցիչը պետք և միանգամից
ամբողջը կարգա, վորից հետո կարող և նախադասու-
թյուննախադասություն թելաղրել աշակերտներին:

Գրելու ժամանակ աշակերտները չպետք և հար-
ցեր տան ուսուցչին մոռացածի մասին: զրանով իրար
խանգարում են, հույսները զնում են հարցնելու հնա-
րավորության վրա և իրենց ուշադրությունը չեն լա-
րում առաջին անգամ արտասանվածը լավ լսելու հա-
մար, յերբ ուսուցիչն առաջարկում է գրել, աշակերտները

պետք և իրենց հիշողության վրա հիմնված գրեն թերագրածը՝ բաց տեղ թողնելով այն բառերի համար, վորոնք մոռացել են:

Թելադրությունը պետք և բնական պայմաններում տեղի ունենա, աշակերտը չպետք և լարված, գըրգըրված, հուղված ու վախեցած վիճակում լինի: Թելադրությունը չպետք և յերկար տեի, վորովհետև այդ դեպքում հոգնում ու ձանձրանում և աշակերտը, վորովհետև

III. ԱՆԳԻՐ ԱՐԱԾԸ ԳՐԵԼ

Մանկավարժներից մի մասն առաջարկում ե ուղագրություն սովորեցնելու նպատակով անգիր արած բանաստեղծությունները զրել տալ աշակերտներին առանց գրքին նայելու, մի մասն ել դեմ և այս առաջարկին:

Հենց սկզբից պետք և ասել, վոր այս յեղանակն առանձին արժեք չունի, վորովհետև հազիվ թե աշակերտները կարողանան միտքը պահել բանաստեղծության բոլոր բառերի ուղղագրությունը և գործածված կետադրությունը, մյուս կողմից ել ցանկալի չե, վոր բանաստեղծություններն ուղղագրական տեսակետից քննվեն դասարանում, վորովհետև դրանով վոչնչանուս կամ թուլանում և նրանց գեղարվեստական արժեքը:

Այս բոլորն ինկատի ունենալով հանգերձ, պետք և ընդունել սակայն, վոր անգիր գրելն ել իր մի վորոց, թեև մի փոքրիկ արժեքն ունի, Արտագրության ժամանակ գրդիաները գալիս են գրքից կամ գրատիւտակից, թելադրության դեպքում՝ ուսուցչից, իսկ անգիր գրելին՝ աշակերտների մտքից: Սա աշխատանքի

մի փոփոխություն ե, վորը թարմացուցիչ և ազդում աշակերտի վրա: Անգիր գրելը մասամբ նախապատրաստում ե շարադրություն զրելու կարողությունը. այս յերկու տեսակի աշխատանքն իրար նման կողմեր ունեն, յերկու դեպքում ել բացակայում ե զիրքը, կամ խոսող անձնավորությունը, յերկու դեպքում ել աշակերտը գրում ե իր մտքի թելադրությամբ: Անգիր գրելը և շարադրելը տարբերվում են նրանով, վոր շարադրության ժամանակ (աշակերտն ստեղծագործում ե, կամ ծանոթ հոգվածների նյութերը մասամբ կերպարանափոխում, իսկ անգիր գրելու ժամանակ հավատարմությամբ, նույնությամբ տալիս և բնագրի ամբողջությունը:

Անգիր գրելու յեղանակից քիչ պետք և ոգտվել զգացմունքներով առատ և լիրիկական բանաստեղծությունները մանավանդ չի կարելի անգիր գրել տալ, ավելի լավ և ընտրել պատմողական բնույթ ունեցող վլուանավորներ:

Ընտրված վոտանավորը դասարանում պետք և քննել ուղղագրական տեսակետից այնպես, ինչպես մյուս նյութերը, դասարանում կամ տանը մի կամ յերկու անգամ արտագրել պետք և տալ վոտանավորը, անգիր գրել տալուց առաջ պետք և կարդալ տալ նույն նյութը միքանի անգամ, նորից հիշեցնել ուղղագրական ուշադրության արժանի կետերը և հետո անգիր գրել տալ:

IV. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ուղղագրական կանոնը բազմաթիվ նման որին ակներից հանած մի ընդհանրացումն եւ կանոնը հասկանալու և տեղին գործածելու համար պահանջվում է կանոնը:

մշակված ու մարզված միտք նամակ պրոդը գիտի
կանոնը, բայց յերբ դալիս ե գործ ածելու տեղը, մա-
սանում ե կանոնը, կամ չի կարողանում անմիջապես
դիմի ընկնել վոր կանոնը հենց այդ դեպքի համար ե
ձեակերպված:

Ա. աստիճանի դպրոցի ուսման Ա. և Բ. տարի-
ների աշակերտների միտքը դեռ բավականին սրված
ու մարզված չե կանոններ հասկանալու և տեղին գոր-
ծածելու համար, այդ պատճառով ել այդտեղ չպետք ե
աշակերտներին զբաղեցնել ուղղագրական կանոննե-
րով, այդ աշխատանքը կարելի յե սկսել ուսման Դ.
տարվանից:

Ուղղագրական կանոնները պետք ե ձեակերպել
պարզ ու դյուրըմրունելի ձևով, պետք ե բազմաթիվ
որինակներից, փաստերից իրենք աշակերտները յեզ-
րակացնեն կանոնը:

Կանոնի ձեակերպումից հետո պետք ե առիթներ
ստեղծել, վոր աշակերտը գործադրի այդ կանոնը, մա-
նավանդ գրավոր վարժությունների ոգնությամբ, այն-
քան պետք ե այդ վարժությունները շարունակել, մինչև
վոր կանոնի գործադրությունը մեքենայական կդառ-
նա աշակերտի համար:

Վ. ՍԽԱԼՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Գրավոր աշխատանքների ժամանակ ուսուցիչն
ամեն միջոցի պետք ե դիմի, վոր աշակերտներն սխալ-
ներ շանեն, բայց ինչ միջոցների յել ուղում ե ուսու-
ցիչը դիմի, սխալներ կպատահեն, վորովհետեւ աշա-
կերտների ուղագրության թուլացումը, ակտիվ ուղա-
գրության անզարդացած լինելը, անհոգությունը, ան-

տրամապիր լինելը և այլն, պատճառ են դառնում
սխալների: Սրանից ել առաջանում ե այն հարցը, թե
ի՞նչպիս ուղղել սխալները:

1. Ցանկալին այն ե, վոր աշակերտն ինքն ուղղի
իր սխալները, գրելուց հետո աշակերտը պետք ե կար-
գա իր գրածը ուղագրությամբ, դանդաղ, մտածելով և
սկզբի շրջանում նույնիսկ վանկ-վանկ. այս կերպ կար-
գալիս սխալներն ավելի հեշտությամբ են նկատվում:
Աշակերտն իր սխալն այնպես պետք ե ուղղի, վոր սխալ
տառը չերևա:

2. Ուսուցիչը պիտի ե ոգնի աշակերտին գրածն
ուղղելու 'ժամանակի: Ցեթե աշակերտների գրածը չկա
գրատախտակի վրա, ինքը գրում ե այդ և ուղղագրա-
կան դիտողություններ կատարում, աշակերտների ու-
շագրությունը հրավիրում այս կամ այն բառի ուղ-
ղագրության վրա և տռաջարկում, վոր տետրում գրածը
համեմատեն գրատախտակի վրա գրածի հիտ և ուղղե
սխալները:

Շատ անգամ անհրաժեշտ չե ամբողջ նյութը գրել
գրատախտակին, այլ կարելի յե գրել ուղղագրական
տեսակետից դժվար բառերը կամ նախադասություն-
ները և գրանց ողնությամբ միայն կատարել վերոհի-
շյալ աշխատանքը:

3. Մանկավարժներից վոմանք առաջարկում են
գրածն ուղղել տալ կողմի ընկերոջով. միևնույն սեղա-
նին նստած աշակերտները փոխում են իրենց տետրե-
րը և մեկը նայում ե մյուսի տետրը և ուղղում սխալ-
ները. ուղղողը սխալն ուղղելուց առաջ դիմում ե կող-
քի ընկերոջը և հայտնում սխալի մասին. յեթե նա
առաջկություն չունի, ուղղում ե սխալը, անհամաձայ-

նության դեպքում դիմում են ուսուցչին Տետրն ուղղելու այս ձեզ ցանկալի չե, վորովհետև ահա հարաբերություն և առաջանում աշակերտների մեջ, կամ սխալ չանող աշակերտը տեսնում և ուրիշի սխալները, վորը մի վորոշ բացասական տպավորություն և թողնում նրա վրա և կամ շատ անգամ ուղիղ գրածն սխալ են դարձնում:

4. Ուսուցիչը պետք է մասնակցություն ունենա սխալներն ուղղելու գործին. աշակերտների գրելու ժամանակ պետք է պտտի դասարանում և տեղնուտեղը ուղիղի կամ ուղղել տա սխալները. բայց այս դեռ բավական չե, նա պետք է շաբաթը մի անգամ գոնե տուն տանի աօակերտների տեսություն և վերահասու լինի, թե աշակերտներից ամեն մեկն ինչպիսի աշխատանք և կատարել և ինչ առաջադիմություն և ցույց տվել անցյալի համեմատությամբ: Այս հանգամանքն աշակերտների վրա գրական ազդեցություն և թողնում, նրանք պարապմունքների մեջ ավելի մեծ լրջություն են մտցնում:

Սխալներն ուսուցիչներից շատերն ուղղում են հետեւյալ կերպ. գծում են տառասխալի տակ և թողնում, վոր աշակերտն ինքն ուղղի իր սխալը կամ գլխի ընկնի, թե ինչ սխալ և արել. կամ թե չե գիծ են քաշում տառասխալի վրա և վրան ուղիղը գրում: Այս յերկու ձեռ ել հանձնարարելի չեն. աշակերտը չպետք է սխալը տեսնի շեշտված վիճակում, կամ չպետք է տեսնի սխալն ու ուղիղն իրար վրա գրած, վորովհետև յերկուսն ել զուգորդվում են հիշողության մեջ, և ապագայում լավ չի հիշում, թե վորն և ուղիղը, և ավելորդ կասկածներ են արթնանում նրա մեջ:

Ուսուցիչն սխալը նույն դույնի թանաքով այնպես պետք է ուղիղ, վոր աշակերտը չկարողանա սխալը տեսնել. նա պետք է տեսնի, վոր ուղղած և բառի մի կամ միքանի տառը, բայց չպետք է տեսնի իր սխալ գրած տառերը:

5. Ուսուցիչն իր դիմուլության տեսրում պետք է նշանակի, թե ինչ բառերի մեջ աշակերտներն ինչպիսի սխալներ են արել, ինչ քանակով, այնուհետև կասարանում պետք է խոսի այդ բառերի ուղղագրության մասին, չասելով, թե ինչ սխալներ են արել, այլ պետք է այդ բառերը նորից ուղղագրական վերլուծության յենթարկի, զրի գրատախտակի վրա, աշակերտների ուղագրությունը դարձնի կարեռը կողմերի վրա, վորից հետո կարող են նույն բառերը գրել տալ աշակերտներին տեսրերում:

Բայց ավելի ցանկալի յե, վոր միքանի գրավոր աշխատանքներ կատարելուց հետո ուսուցիչն ընդհանուր և կարեռը բառերից, վորոնց մեջ սխալներ են արված, մի ամբողջական պատմություն հորինի և բացատրական թելադրության կամ արտագրության մեթոդով գրել տա աշակերտներին:

6. Այս բոլորից զատ, իբրև փորձ, կառաջարկելինք հետեւյալը. աշակերտների կատարած գրավոր աշխատանքներն ուսուցիչը տառում և տուն և նայում ուղղագրական տեսակետից, բայց ուղղումներ չե կատարում. աշակերտները միանգամայն գաղափար չպիտի ունենան սխալներն ուղղելու աշխատանքի մասին:

Ուսուցիչը մի առանձին թերթի վրա կամ իր տեսրում նշանակում և աշակերտների սխալ բառերը և մյուս դասի համար այդ բառերից մի պատմություն

Կ կազմում և ուղղագրական վերլուծության յինթարկելով գրել տալիս աշակերտներին:

Թվում ե, վոր յեթե ուսուցիչը տարիներ շարունակ աշխատանքներն այսպես տանի, հավանորեն աշակերտները շատ ավելի շուտ և առանց ավելորդ եներգիա ծախսելու կողղագրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. КУЛЬМАН.—Методика русского языка 1914
2. ПОПОВ А. К.—Методика русского языка 1915
3. ТРОСНИКОВ.—Обучение письму 1913
4. РАЕВСКИЙ.—Беседы по методике русского языка 1913
5. ТИХОМИРОВ.—Чему и как учить на уроках родн. языка 1914
6. ЗАЧИНЯЕВ АЛ.—Орфографич. пропись.
Изд. 8-ое, выпуск I и II 1914
7. АФАНАСЬЕВ П. О.—Методика родного языка в труд. школе 1924
8. ПЛОТНИКОВ И. П.—Родной язык в комплексе 1925
9. МОНЮ.—Технические навыки письма, чтения и счета в трудовой школе I ступени 1926
» Навыки по орфографии 1927
10. БЮЛЛЕТЕНЬ №11 офиц. распоряж. и сообщ. Народн. Комисс. Просвещения АССР 1926
11. RUDE AD.—Methodik des gesamten Volks- shulunterrichts 1908
12. REGENER.—Besondere Unterrichtslehre 1908
13. SCHOCKE ARTUR.—Der Deutschunterricht in der Arbeitsschule 1922
14. LÜTGE ERNST.—Beiträge z. d. deutschen Sprachunterrichts 1923
15. SCHMIEDER.—Besondere Unterrichtslehre 1926

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>bջ</i>
I. Զանազան մեթոդների գնահատականը	3
II. Մեթոդական ընդհանուր պահանջներ	13
III. Ուղղագրություն սովորեցնելու զանազան միջոցներ	19
a. Արտագրություն	»
բ. Թելագրություն	27
գ. Անգիր արածը գրել	32
դ. Ուղղագրական կանոններ	33
ե. Սխալներն ուղղելու յեղանակը	34

«Ազգային գրադարան



NL0239817

Ca
250



ԳԻՒՆ 40 Կ.